Գուրգեն Մահարի

Ծաղկած փշալարեր

9

Այո՛, հիմա շատ բան պարզ է, հիմա ճամբարային բնակիչները շատ լավ գիտեն, թե ինչ կարող է պատահել նման դեպքերում: Անցան, այո՛, անցան խավար ժամանակները . . .

Կուլանի դեպքին հաջորդեցին ևս մի քանի դեպքեր: «Վառվեցին» գորկիական բեղերով Մավրինը, բաղնիքի վարիչ Բագիրբեկովը, սափրիչ Ծուլուկիձեն, խանութի վարիչ Բոշը, գրասենյակային և ուրիշ պատասխանատու աշխատողների բարաքի ավագ Շտրումը և . . . և ուրիշներ: Պատահեց և այնպես, որ ճամբարից փոխադրվեց նաև պատճառավոր բրիգադավարուհի Լիդա Չաուշենկոն, մի առույգ և հաղթահասակ ուկրաինուհի, բայց . . . բայց մեջտեղ ոչ մի կալանավոր «չվառվեց»: Երբ պետը հարցրեց նրան, թե ով էր իր հերոյը, այսինքն հերոսը, նա անգետ դուրս եկավ և միայն ուսերը թոթվեց: Եվ իրավացի էր . . .

Դուլցինաները քշվեցին, բայց ո՞ւր . . . հիմա պարզ է, թե ուր: Առաջին ճամբարային կետը գտնվում է մեր ճամբարից տասներկու, գուցե մի քիչ ավելի, հնարավոր է նաև քիչ պակաս կիլոմետրի վրա: Այնտեղ էլ կան կանայք, բայց, չգիտես ինչու, նրանք ապրում են ընդհանուր գոտում, տարբեր բարաքներում: Ճամբարը փոքր է, ընդամենը՝ չորս բարաք, երևի այս է պատճառը, որ նպատակահարմար չեն համարել կիսել ճամբարը: Բայց ճամբարն ունի իր առանձնացած կցորդը՝ հինգերորդ բարաքը, որը օրգանական կապ չունի մայր

Յատուկ Պոէմ

ճամբարի հետ, չնայած, որ մի պատով, այսինքն մի ցանկապատով միայն բաժանված է նրանից: Կցորդն ապրում է իր ինքնուրույն, անկախ կյանքով, ունի իր խոհանոցը, բաղնիքը, անգամ տասը մահճակալանոց մի փոքրիկ շինություն, որը կոչվում է . . . հիվանդանոց: Սա է («ականջդ բեր, ասեմ») ծննդաբերական տունը:

Բարաքը մեծ չէ, մոտ քսան տեղանոց, փայտե մահճակալները լայն են, վագոնային սիստեմով շինված: Ահա այստեղ են բերում ճամբարային օրենսդրության դեմ մեղանչածներին, բոլոր Մարիամ Մագթաղինացիներին:

Ինչպես ծննդատանը, այնպես և բարաքում երեխաների ճիչ կամ ճիչեր չեն լսվում: Նրանք ծնվում են վախեցած և կարգապահ, երևի ժառանգաբար: Նրանք նվում, նվնվում են հիվանդ աղավնիների նման: Ըստ երևույթին, կարգին ճչալու համար առողջ թոքեր պետք է ունենալ, իսկ ճամբարում ծնվածները ծնվում են թույլ, մանր, հիվանդակախ:

Մայրերի սնունդը, ընդհանուր կալանավորական նորմաներից չի անցնում: Միակ տարբերությունը աշակերտական ռետինի չափսի կարագն է, քսան գրամ շաքարը և մի բաժակ յուղազտիչից թորված կապտավուն կաթը: Դրա փոխարեն մայրերն իրավունք ունեն խոհանոցից ցերեկ թե գիշեր ստանալու եռացած ջուր անսահմանափակ քանակությամբ: Մայրերը եռացրած ջուր շատ են խմում, նրանք հնարել են մի հետաքրքրիր տեսություն, ըստ որի «երկու լիտր եռացված ջուրը փոխարինում է հինգ հարյուր գրամ հացի»: Ու խմում են:

Եթե երեխան, ի հեճուկս բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների, շարունակում է համառել և ապրել, ապա կաթից կտրելուց, ավելի շուտ կաթը կտրվելուց հետո մորն առաջին իսկ էտապով ուղարկում են ուրիշ, հեռավոր մի ճամբար, որպեսզի երազում անգամ չփայփայի զավակին ու նրա հորը տեսնելու հույսը: Իսկ եթե երեխան մարում էր մոմի նման, մորն ուղարկում էին այն ճամբարը, որտեղից եկել էր . վերադարձողները շաբաթներով իրենց չէին գտնում ծանր ապրումներից, պատմում էին իրենց ապրած մայրության բերկրաքների մասին այնպիսի մանրամասնություններ, որ ունկնդիրները մայր դառնալու մտքից անգամ սարսափում էին: Հակառակ այս ամենին, մայրանալու դեպքերը չէին պակասում: «Եթե այս է կյանքը և սրանով էլ պիտի վերջանա՝

ապա պետք է ամեն ինչ փորձել, տանել ամեն դառնություն և որքան շատ դառնություն՝ այնքան լավ», — երևի այս էր երիտասարդ կալանավորուհիների հոգեբանությունը:

Երբ հայրերը նիհարած և գունատված դուրս էին գալիս պատժախցերից, բարաքը թվում էր նրանց հայրենի տուն: Նրանք ապրում էին փոքր ազատության մեծ զգացմունքը: Թվով ութ գրասենյակային աշխատողներ ամեն օր մեր Ճամբարից, կտրելով տասներկու կիլոմետր տարածություն, գնում էին, ավելի շուտ՝ տարվում էին առաջին ճամբարային կետ, նրանք աշխատում էին բաժանմունքի վարչության գրասենյակում և երեկոյան վերադառնում էին հետաքրքիր լուրերով: Նրանք էլ պատմում էին հայրերին, թե ո՞վ է նորածինը, տղա՞, թե աղջիկ, թե ինչպե՞ս են զգում մայրերն իրենց, և երբեմն կարող էին ցանկապատի անցքից որոշ օգնություն հասցնել աղետավոր մորը:

Մոր գնալուց հետո ապրող երեխան դիմազրկվում էր վերջնականապես: Ընդհանրապես գրավոր ոչ մի տող ու տվյալ չէր ուղեկցում նրա աշխարհ գալուն: Երեխան համարակալվում էր և այդքանը միայն: Երեխաներին խնամում էին տարիքավոր կալանավոր կանայք . մայրերի գնալուց հետո նրանք դադարում էին երեխաներին ճանաչելուց, ավելի շուտ՝ ճանաչում էին նրանց համարներով: Այնպես որ եթե մայրերից մեկն ու մեկը երկու-երեք ամիս հետո ետ վերադառնար և փորձեր տեսնել իր երեխային, ոչ մի ուժ չէր կարող որոշել, թե որն է նրա հարազատը:

. . . Այո՛, այո՛, այս գործում ևս Մամոն առաջիններից չէր:

Իսկ հիմա նորից ձմեռ է, մեղրալուսնի գիշերների նման կարճ ամառն անցավ: Գործարար բակի ու գրասենյակի աշխատողներն անցան իրենց անմիջական պարտականությունների կատարմանը: Ծանոթ մոմոռոցով բացվում է բրուտանոցի դուռը, և մենք ներս ենք մտնում, ինչպես ամառանոցներից վերադարձողներն են մտնում իրենց տները: Ամեն ինչ թվում է խունացած, փոշոտ, բայց հարազատ: Առաջին օրն աշխատանքը չի կպչում ասես: Տաշտը դատարկ է, ցեխը նախապատրաստված չէ հունցելու համար: Բացի դրանից, հարկավոր է զբաղվել ընդհանուր մաքրությամբ, կարգավորումով: Գերմանուհին մեկ-մեկ իջեցնում է իր քանդակներն ու մաքրում փոշին: Ամառվա ընթացքում

նրանք կարծես ծերացել են, խունացել: Բայց ահա անցնում են օրեր ու շաբաթներ, և ամեն բան գտնում է իր տեղը, ուրիշ խոսքերով՝ կյանքը մտնում է իր սովորական հունը:

Աշխատանքային օրը վերջացավ: Բրուտանոցում մթնոլորտը, ինչպես Իոնասը կասեր՝«դժվար էր», այսինքն ծանր էր: Լյուդմիլան պատրաստված կավը խնամքով ամրացրեց իր աշխատանքային քառակուսի տախտակին, որպեսզի առավոտյան չորանոցը կարգի բերելուց հետո փորի ու քչփորի: Սկսեց ձյունել: Հնչեց բանթողի զոնգը, և մենք դուրս եկանք բրուտանոցից: Ես խոր շնչեցի ձմեռային, ձյունախառն օդը և կարծես թեթևացա: Օրհնված լինես դու, կյանք . կարելի է ազատ կերպով շնչել այս մաքուր, պաղ, պաղպաղակի նման ախորժելի օդը՝ առանց խախտած լինելու օրենքը: Ձյունը ճռճռում է մեր ոտների տակ, և ինձ թվում է, որ բրուտանոցի մյուս բնակիչներն էլ ինձ նման զգում են իրենց թեթևացած: Առաջից գնում է Լյուդմիլան, նա աշխատում է քայլել թեթև, և այդ նրան դժվարությամբ է հաջողվում: Մամոն մատով ցույց է տալիս Աշոտ դայուն Լյուդմիլայի ձախ ոտի թաղիքե ոտնամանն ու ռուսերեն ասում .

— Ռեմո՛նտ նադո՛, — նորոգել է պետք . . .

— Նադո, — արձագանքում է Աշոտ դային:

Դերձակուհիների փոքր խմբակն առանձնանում է, Լյուդմիլան միանում է նրանց: Կալանավորները կանգնում են հնգյակներով: Հաշվում են: Կազմը լրիվ է: Հնչում է չուվաշ Պետրովի խոպոտ նախազգուշացումը .

— Կարգը խանգարողների վրա իրավունք է տրվում կրակել . . . գնացինք . . .

Գնացինք: Իսկ երկինքը շարունակում է ձյունել այնպիսի եռանդով, որ կարծես արև ասած բանը գոյություն չի ունեցել երբեք:

Առաջին բանը, որ լսում ենք ճամբարում, դա այն է, որ «կոմիսիա է գալիս»: Առաջին դեպքը չէ: Շատ անգամ են կոմիսիաներ եկել ու գնացել և ոչ մի հետք չեն թողել իրենց ետևից: Հանձնախմբեր եկել են բաժանմունքից, Մարիինսկից . . . Բայց ասում են վաղվա հանձնախումբը գալու է

Կրասնոյարսկից: Ինձ նման հները հիշում են, որ Կրասնոյարսկից նույնպես հանձնախմբեր են եկել: Նույն արարողությունը, նույն արդյունքը: Ինձնից սակավաթիվ հները պնդում են անգամ, որ ճամբարում երկու անգամ եղել է մոսկովսկայա կոմիսիա, այսինքն՝ մոսկովյան հանձնախումբ: Նույն արարողությունը, նույն արդյունքը: Հանձնախումբը կազմված է մի քանի հոգուց, որոնք առանց բացառության զինվորականներ են: Նրանք անցնում են բարաքից-բարաք, երկու կողմ շարված կալանավորների միջով: Գանգատվելն արգելված է, բողոքել՝ այդ էր պակաս: Հնարված է ուրիշ մի՝ ըստ ամենայնի դիվանագիտական դարձվածք .

— Պրետենզիաներ կա՞ն . . .

— Ոչ, ամեն ինչ կարգին է:

Հանձնախումբն ուղեկցում է ճամբարի պետը: Եթե հիմարանաս և որոշ իրավացի պրետենզիաներ ներկայացնես, հանձնախմբի մեկնումից հետո ճամբարի պետը հետդ չոր-չոր կմաքրի հաշիվը և այնպես կմաքրի, որ քեզանից թացություն անգամ չի մնա:

Ընթրիքից հետո, երբ մենք պատրաստվում էինք քնելու, Մամոն բարձրացավ տախտակամածին և նստեց: Նրա մտահոգ դեմքն ավելի էր մթնել:

— Կոմիսիա՞ է գալիս, — հարցրեց նա գրեթե շշուկով:

— Ի՞նչ կա, որ, — ժպտաց Աշոտ դային, — առաջին անգա՞մն է . . .

— Օ՛ դա դուզ դըր, — այդ է ճիշտ է, — համաձայնվեց նա մտախոհ, վար իջավ և վերադարձավ իր տեղը:

— Սիրտը աի է ընկել, — ասաց Աշոտ դային, — ինչով-ինչով, կոմիսիան Մամոյի ընտանեկան գործով չի զբաղվի . . .

Բացվեց արևոտ մի առավոտ: Եթե չլիներ նոր նստած թարմ, բամբակի նման թարմ ձյունը, անհնարին էր հավատալ, որ պարզ, հստակ, սիբիրյան կապույտ երկինը կարող է ամպել ու ձյուն տեղալ:

Յատուկ Դոէմ

Բրուտանոցում ես վառում եմ վառարանը: Ջուր է հարկավոր, եռման ջուր, որ լցնեմ սառած կավահողին և բարձրանամ տաշտը: Գործարար բակում Մամոն անհետացավ: Գերմանուհին անհանգստացավ, անգամ հարցրեց:

— Ո՞ւր գնաց Մումուն . . .

— Մամո՞ն . . . ո՞վ գիտե Մամոյի գործերը, — պատասխանեց Աշոտ դային: — Մի բան միայն կարող եմ հաստատ ասել, որ Մամոն չի կորչի . . .

— Չեն թողնի, — ժպտաց Իոնասը, — կորչել չկա . . .

Եկավ Մամոն, աջ ձեռքի թաթմանով բռնած ձախ ոտքի հնամաշ, կերզե մի ոտնաման: Նա մոտեցավ գերմանուհուն, մատով ցույց տվեց նրա ձախ ոտքի թաղիքե ոտնամանն ու ասաց .

— Ռեմոնտ նադո . . .

Գերմանուհին հասկացավ . ժպտաց, զգացվեց, նստեց և աշխատեց դուրս քաշել երկարափող ոտնամանը: Իր դրության բերումով նա դժվարացավ: Մամոն կռացավ, արագ ազատեց գերմանուհու ոտքը, հագցրեց իր բերած կերզե ոտնամանը, վերցրեց թաղիքե երկարափողն ու գնաց: Այս ամբողջ արարողության ընթացքում գերմանուհին նայում էր Մամոյին լայն բացված աչքերով, կարծես առաջին անգամ էր տեսնում նրան: Հետո, չգիտես ինչու, հանեց նրա ականջակալներով գլխարկը, ժպտաց . . . Մամոյի գլուխը ակներևաբար սեխաձև էր, երկարավուն, խորապես ազգային՝ աղրբեջանական . . . Նա մատներով շոշափեց Մամոյի գլուխը:

Մամոն վերադարձավ: Այդ միջոցին ես սառած ու թմրած ոտներով կռվում էի ցեխի դեմ: Մամոն մերկացրեց ոտները և եկավ ինձ փոխարինելու: Ես դուրս թռա տաշտից և վազեցի դեպի վառարանը ուշաթափ ոտներս խելքի բերելու: Մամոն կոխում է ցեխը և երանությամբ նայում գերմանուհուն, որը զբաղված է հերթական գլխով, զննող աչքերով երբեմն նայելով Մամոյին:

Առաջին, ինչպես միշտ, գլխի ընկավ Իոնասը: Նա ժպտաց, բայց այս անգամ ամբողջ դեմքով, ուզեց մի բան ասել, Աշոտ դայուն, թեքվեց նրա կողմը, հետո

Յատուկ Պոէմ

կարծես միտքը փոխեց, արագ շարժեց ոտքը, և անիվի պտույտն ավելի արագացավ: Ես այս ամենը տեսնում էի ու չէի տեսնում: Իմ մտքերը հեռու էին: Այսինքն ոչ այնքան հեռու, ընդամենը տասներկու կիլոմետրի վրա, գուցե մի քիչ ավել կամ գուցե մի քիչ պակաս . . .

Ես մտածում էի առաջին ճամբարային կետի մասին: Բաժանմունքի գրասենյակային աշխատողներն օրեր առաջ հայտնեցին, որ այնտեղ մի հայ կալանավոր կա, ինքն էլ ուսուցիչ: Ես խնդրեցի իմանալ նրա ով լինելը: Հաշվետար Էմանուել Ալտհաուզենը վերադառնալով աշխատանքից՝ հատկապես մտավ մեր բարաքը:

— Կառապետյան, — ասաց նա առանց նախաբանի:

— Շնորհակալություն, — պատասխանեցի ես առանց վերջաբանի և նա գնաց: Կարապետյան, դե, արի իմացիր, թե ո՞վ է հայ ուսուցիչ Կարապետյանը:

Այս մասին ես պատմեցի Աշոտ դայուն: Մեր ճամբարի հայերը, պիտի ասել, անհետաքրքիր մարդիկ էին: Նրանց մեջ ինձ համար ամենահետաքրքիր անձնավորությունը Արտաշես Ջանփոլադյանն էր, ինքը՝ պրոֆեսոր և քիմիկոս: Տոհմական հայ գյուղացու դիմագծերով և ազնիվ հոգու այս մարդն իր շունչը փչեց ֆիզիկական ծանր աշխատանքի վրա: Նա կարող էր դիմել, խնդրել, որ իրեն աշխատանք տան գրասենյակում: Այս մասին ես նրան մի քանի անգամ հիշեցրի, պատասխանը նույն էր .

— Եթե կալանավոր, ապա լիարժեք կալանավոր, գրասենյակային կալանավորը ո՞րս է . . . այս «լիարժեքը» նա ասում էր պալնացեննի և արտասանում էր իսկապես պա՛լնա՛ցե՛ննի՛, իսկ «ո՞րս է»-ն արտասանում էր նենգափոխված և ժպտում մանկական, վարակիչ ժպիտով:

Հետաքրքիր անձնավորություն էր համբավավոր «դյադյա Միշան»՝ խոհանոցի շեֆ-խոհարար մեսրոպ Ուզունյանը: Առանձին կրթություն չուներ Մեսրոպը, ինքը սևծովյան ափի բազմաթիվ ավանների հայերից էր, որոնք ժամանակին գաղթել էին Տրապիզոնից, Սամսունից . . . Նրանք մեծ մասամբ զբաղվում են իրենց հայրերի մասնագիտությամբ, ծխախոտի գործով և մեծ հասույթ են ստանում

դափնետերևներից:

Ես արդեն Աշոտ դայու հետ ծանոթ էի, երբ Մարիինսկում հանդիպեցինք Մեսրոպին: Խումար աչքերով, նիհար, կարճահասակ, մարդամոտ մարդ էր Մեսրոպը և զուրկ չէր հումորի զգացումից: Պատրաստվում էր Նովոիվանովսկի էտապը: Ասացին հեռու չէ, ասացին երկու շաբաթով . . . այդ երկու շաբաթը ութ տարի տևեց, այո, ութ տարի: Այս ութ տարվա ընթացքում մենք Մեսրոպի հետ եղանք մի ճամբարում . . .

Մեսրոպը խոսում էր իրենց բարբառով, — և լինում էին դեպքեր, երբ թարգմանչի սուր կարիք էր զգացվում: Էտապի ճանապարհին նա պարզեց իր ունեցած հայացքն աշխարհի ու կյանքի մասին:

— Իրեք պան կա, մնացածը՝ հե՛չ, իրեք պան, — ուտո՛ւշ, խմո՛ւշ, սիրո՛ւշ . մափուսի մեջ սիրուշ չկա, կմնա ուտուշ-խմուշ . . .

Ութ տարի Մեսրոպն իրեն չդավաճանեց:

Երբ էտապը ճանապարհի տանջանքից հոգնած ու ջարդված մտավ երրորդ ճամբարային կետի դարպասներից ներս, Մեսրոպի առաջին գործը եղավ . . .

Նա բացեց իր կապոցը, այնտեղից դուրս քաշեց ինչ-որ բանով լցված ինչ-որ տոպրակ և ասաց .

— Երթանք-տեսնենք ի՞նչ կրնենք . . .

Տոպրակը դրեց թևի տակ, գնաց, տեսավ, ինչ ըրավ-չըրավ՝ այդ չէր կարևորը, կարևորն այն էր, որ մյուս օրը, երբ բոլոր կալանավորներին դաշտ հանեցին աշխատելու, Մեսրոպը չկար:

Երեկոյան, երբ մենք հոգնած ու փոշոտ ճամբար մտանք, Մեսրոպը դիմավորեց մեզ:

— Ձեզի կարոտցա, ծո՛ . . . ըսեք, ի՞նչ եղավ . . . ե՞ս . . . մե ոտս դրի կուխնեն նե՛րս . . . տեսնինք ի՞նչ կընենք:

Յատուկ Պոէմ

— Գործիդ անունն ի՞նչ է, — հարցրեց Աշոտ դային:

— Աման-չաման կլվամ, պոլ-մոլ . . . կուխնու բաղնիք մեմ անցում ձե՞ռքս, էլ ժիվի դա ժիվի — ապրի ու ապրի . . .

Չանցած երկու շաբաթ, Մեսրոպը տեր կանգնեց խոհանոցի մեծ կաթսաներից մեկին: Դա մի քայլ առաջ էր, թեև Մեսրոպի իշխանության տակ անցած մեծ կաթսան, ավա՛ղ, սահմանված էր միայն անարատ ջուր եռացնելու: Առավոտյան ու երեկոյան ջուր էր եռացնում ու անաչառ, անգամ շռայլ շերեփով եռացրած ջուրը բաժանում էր կալանավորներին: Ինքն ասում էր «չայ կեփեմ»:

Մեսրոփը տնից ծանրոց ստացավ: Նա հյուրասիրեց ինձ ու Աշոտ դայուն խոզի ճարպով, հյութեղ, մսոտ, սև սալորի չրով: Նա ծխող չէր, բայց մեծ քանակությամբ ծխախոտ ստացավ, ինչպես նաև զանազան համեմունքներ, դափնետերև, սև և կարմիր պղպեղ, ախտոր, չորացրած ռեհան: Ծխախոտը նվիրեց խոհարար տաջիկ Յունուսին, կարգադրիչ Սիդորովին, կոմենդանտ Ժիգելյովսկուն, իսկ համեմունքները . . .

Մի անգամ լուր տարածվեց, որ ճամբար է ժամանում բաժանմունքի պետը: Հրահանգվեց կարգի բերել ճամբարը, այնպես, որ ամեն ինչ պլպլա, թեև ճամբարում պսպղալիք բան չկար: Լվացին բարաքների տախտակամածերը, հատակը: Քիչ թե շատ պսպղացրին բարաքների փոքրիկ պատուհանների ապակիները:

Մեսրոպը բարաք ընկավ, փոքրիկ բանալիով բացեց իր արկղը, համեմունքների տոպրակը չանթեց, — «յա ամկարող աստված», բացականչեց ու գնաց: Այս «ամկարող աստվածը», որը ոչ այլ ոք էր, եթե ոչ ամենակարող աստվածը, պատրաստակամ և ուշադիր կանգնեց Մեսրոպի գլխի վերև:

Նման դեպքերում խոհարար Յունուսը նախազգուշացված էր լինում և իր դեղին կաշվից դուրս էր գալիս կալանավորների մթերքներից մի կարգին ճաշ պատրաստելու համար: Չգրված օրենքի համաձայն, երբ բաժանմունքի պետը ճամբար էր գալիս, կալանավորների ճաշը համտես անելու, որակը ստուգելու պատրվակի տակ, ճամբարի պետի հետ վերջինիս առանձնասենյակում ճաշում

էր: Բայց ի՞նչ կարող էր պատրաստել խեղճ Յունուսը կալանավորների խեղճ մթերքից՝ իր խոհարարական հմտությունը ցույց տալու համար . . .

— Էտո դելո դայ մնե, — Յունուսի ականջին շշնջաց Մեսրոպը, — յա գնայու չտո դելայու . . . այդ գործը թող ինձ, ես գիտեմ ինչ կանեմ:

Մեսրոպը չէր խաբում Յունուսին, իսկապես որ նա գիտեր իր գործը . . .

Յունուսը տվեց իր համաձայնությունը:

— Դելայ, դելայ, բալշոյ-բալշոյ նե գավարի, — արա, արա մեծ-մեծ մի խոսի . . .

Այդ խոսակցությունից հետո էր, որ Մեսրոպը բարաք ընկավ և իրեն օգնական նշանակեց «ամկարող աստուն»:

Վերադառնալով խոհանոց, Մեսրոպը հատուկ պահարանից ստացավ պետերի համար միայն գործածելի փոքր չափսի պղնձամանը, ընտրեց իր ուզած միսը և անցավ գործի: Երկու ժամ անց ամենաբութ քիթն անգամ չէր կարող չզգալ ախորժելի համեմունքներով պատրաստված ճաշի հաճելի բուրմունքը: «Տրապիզոնսկի կայլա՛», — այսպես անվանեց Մեսրոպն իր զարմանալի կերակուրը, որը կարողացավ խլացնել վիթխարի կաթսաներում խաշվող սառած կաղամբի ու կարտոֆիլի տհաճ հոտը:

Յունուսի ուրախությանը չափ-սահման չկար: Նա խոստացավ խոսել կարգադրիչի և կոմենդանտի հետ, որ Մեսրոպին նշանակեն իրեն օգնական:

Եկավ վերջապես բաժանմունքի պետ Կուցենկոն: Բարձրահասակ, զինվորական տարազով Կուցենկոն, ճամբարի պետի ուղեկցությամբ, ետևից ունենալով կարգադրիչին և կոմենդանտին, լայն և հաստատուն քայլերով անցավ բարաքից-բարաք, մտավ բաղնիք, հացատուն, . . . ավագներն ընդունեցին նրան՝ «Ուշադրությո՛ւն» գոռալով բարաքով մեկ, կալանավորները պատկառանքով ոտքի կանգնեցին . . . Ջոհեր չեղան:

Երբ նրանք քաշվեցին ճամբարի պետի առանձնասենյակը, կոմենդանտի հրահանգով Յունուսը սպիտակ սփռոցով ծածկված՝ ծանրաբեռնված ափսեն

բարձր բռնած մտավ պետի առանձնասենյակը, ազատեց ափսեն և դուրս եկավ:

Անցավ մոտ կես ժամ: Արտաքուստ հանգիստ, սակայն անհամբերությունից եռալով՝ Մեսրոպը զբաղված էր ջուր եռացնելու պատրաստությամբ, երբ լսվեց կոմենդանտի հրահանգը . — Внимание! — Ուշադրությո՛ւն: Մեսրոպը շտկվեց: Ներս մտան երկու պետերը, ապա Ժիգելյովսկին և Սիդորովը: Բաժանմունքի պետը չափեց խոհանոցի երկայնքը, հետո լայնքը, ապա մոտեցավ Յունուսին:

— Այսօրվա քո պատրաստած ճաշի անունն ի՞նչ էր, — հարցրեց նա խոհարարին չոր և պաշտոնական:

Յունուսը գունատվեց:

— Ես . . . ես չպատրաստեցի այսօրվա ձեր ճաշը, քաղաքացի պետ . . . ներողություն եմ խնդրում . . . այս մարդը . . . խնդրեց . . . իսկ ես, հիմարի պես . . .

Պետը չափեց Մեսրոպին գլխից մինչև ոտը:

— Ազգանո՞ւն:

— Ուզունյան:

— Դո՞ւ պատրաստեցիր ճաշը:

(— Լեզուս պլլվավ, — պատմում էր նա հետագայում, — ես ոչ-այոն մոռացա . . .):

— Ինչո՞վ պատրաստեցիր ճաշը, — շարունակեց պետն իր հարցաքննությունը:

(— Տոպրակ բացի, զառ-ղավաթ դրի ստոլին, — ահա, — ըսի, — չիստի պրոդուխտ, մաքուր մթերք, էսիկ բիբար ի, էսիկ սև, էսիկ կարմիր . . . էսիկ ռահան, էսիկ լավրիկ . . . չիստի, բեզապասնի . . . մաքուր, անվտանգ . . .):

— Այս մարդն ի՞նչ է անում խոհանոցում, — հարցրեց պետը կարգադրիչին:

Յատուկ Պոէմ

— Ժամանակավորապես . . . ջուր է եռացնում, — գլուխը կորցրեց Սիդորովը:

— Так, так, — այդպես, այդպես, — ասաց պետը և դիմեց դեպի դռները:

— Տեսա՞ր, — գրեթե լացակումեց Յունուսը, — ի՛նչ բերեց իմ գլխին:

— Ի՞նչ անեմ, — խեղճացավ Մեսրոպը, — ես ի՞նչ մեղավոր եմ, որ . . .

Նա ուզեց ասել, — ես ի՞նչ մեղավոր եմ, որ նա իր բերնի համը չգիտի, — ու դեռ ավելացնել, — էշն ի՞նչ գիտի կուժն ինչ է, — բայց բարվոք համարեց լռել: Ինչո՞ւ էր կատաղել պետը . — երևի բիբար շատ է փախել, — մտածում էր Մեսրոպը և իրեն հանդիմանում, — քո ի՞նչ գործն էր, օլան . . .

Մյուս առավոտյան վազեց Ժիգելյովսկին:

Ուզունյա՛ն, к начальнику!, Յունո՛ւս, к начальнику, պետի՛ մոտ:

Վերջացավ, մտածում է Մեսրոպը, տոպրակ թալենք վզերս, էթանք դաշտ: Ի՞նչ իմանար Մեսրոպը, նաչալնիկների բնավորությունը, նրանք գոռալով են հարցաքննում, գոռալով քշում էտապ, իզոլյատոր, գոռալով . . . նշանակում շեֆ-խոհարար:

— Յունուսին տվին ինձի պամոշնիկ — օգնական:

Այս է պատմությունն այն իրադարձությունների, որոնց ուժով Մեսրոպ Արուտյունովիչ Ուզունյանը, նույն ինքը Դյադյա Միշան խոհանոցի բանալին «ձեռք անցուց», իսկ Յունուսը դարձավ նրա օգնականը: Ժիվի՛, դա ժիվի՛:

Կարճ ժամանակում Մեսրոպի վիզը կարճացավ, հաստացավ, և նրա վրա ծալքեր երևացին: Նշանավոր ուտող էր Մեսրոպը, նա ուտում էր ոչ միայն ցերեկը, այլև գիշերով: Մի գիշեր իսկապես խիստ կարիք զգացվեց թարգմանչի: Այդ օրը, երեկոյան, Մեսրոպը խոհանոցից մի քանի խաշած կարտոֆիլ էր բերել, տոպրակով պահել, որ գիշերը զարթնի և ուտի: Ուտուշ-խմուշ ոչ միայն ցերեկով, այլև գիշերով: Տոպրակը կախեց նա սյունին, մի քիչ գանգատվեց, որ ուտուշ-խմուշ կա, բայց սիրուշ . . . — գիշեր երզիս աղավնակներ տեսա,

քյաստլիկ աղավնակներ, — հաղորդեց նա: — Կարող է ազատվես, — երազը բացատրեցի ես: — Ազատվուշ չկա, էրգի աղավնակ՝ կնիկ ասել է, կնիկ . . . Ու քնեց:

Գիշերվա մի ժամի մեկը բոթում է կողս:

— Չե՞ս լսե . . . քեզի եմ . . . — Մեսրոպն է:

— Ի՞նչ կա, — հարցնում եմ:

— Փոսփոլներ կոստիլներ տարան, — պատասխանում է Մեսրոպը:

— Չեմ հասկանում, — ասում եմ, — ի՞նչ փոսփոլ, ի՞նչ կոստիլ:

— Ծո, դու հայերեն չե՞ս բեջարե, — բարկանում է Մեսրոպը, — քեզի կըսեմ՝ փոսփոլներ կոստիլներ տարան:

— Կոստիլը ի՞նչ է, Մեսրոպ, — քունն աչքերիս մտնում եմ մանրամասնության մեջ:

— Ծո, ամեն օր կուտես, անուն չգիտե՞ս . . . կարտոֆիլ որ ըսեմ, կհասկնա՞ս:

— Հասկացա, — ասում եմ, — հետո՞ . . .

— Փոսփոլներ տարան . . .

— Փոսփոլն ո՞վ է, — հարցնում եմ ես:

— Ծո, դու փոսփոլն է՞լ չգիտես ինչ է, ի՞նչ հայ ես, — հուսահատվում է Մեսրոպը:

Ահա թե երբ և ինչու սուր կարիք զգացվեց թարգմանչի: Վաղ առավոտյան, երբ մենք զարթնում ենք, Մեսրոպն խոհանոցում արդեն շերեփ է խաղացնում, բայց երբ տեսնում ենք սյունից կախված մեսրոպի կրծոտված, ծակված, տոպրակը, հասկանում ենք պատահածը: Մկնե՛րը . . .

Յատուկ Պոէմ

Երեկոյան, երբ ես նրան ասացի, որ «փոսփոլի» իսկական հայերենը մուկն է, նա ուսերը զարմացած թափ տվեց: — Հայն է՞լ փոսփոլին մուկ ասի . . .